IV

ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ

DOI: 10.54503/2953-805X-2024.6-158

Սվետլանա Պողոսյան, *պ.գ.թ.*
ՀԱԻ/ՀԱԹ

ՀԱԳՈՒՍՏԸ ՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԵՎ ԵՏԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԻՉ

Հոդվածի թեման արդիական է և նորութային: Ազգաբանական տեսանկյունից ուսումնասիրելով և համադրելով հագուստն ավանդական տարազին՝ բացահայտվում են սեռային՝ կնոջ և տղամարդու, սոցիալական, հոգեբանական, գեղագիտական և էրոտիկ, սեզոնային և պրեստիժային, առօրյա և տոնածիսական գործառույթների և դրանց տարածման աստիճանի առանձնահատկություններ: Դրանց հետազոտումը կարևոր է ավանդական մշակույթի, տվյալ դեպքում՝ տարազի համակարգի փոփոխությունները, ինչպես նաև խորհրդային և ետխորհրդային հագուստի զարգացման միտումները տարբեր սոցիալական խմբերում և ենթախմբերում դիտարկելու առումով՝ տեղական և փոխառված ու համահարթեցված տարբերակներով հանդերձ:

Հիմնաբառեր՝ սեռային, գեղագիտական, խորհրդային, ետխորհրդային, զարգացման միտումներ, նախընտրություններ, կարգավիճակ, արտասահմանյան:

Ներածություն

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո տնտեսության և կենցաղի մեջ տեղի ունեցած փոփոխությունները հանգեցրել են նաև տարազի համալիրների և դրանց բաղկացուցիչ տարրերի հետագա փոփոխության, որն առաջին հերթին արտահայտվել է զգեստի ձևի (երկմաս, կարճափեշ), անվանման (*յուբկա, դեյրա, կուրտկա, ժակետ, պալտո*) և նյութի ու գործվածքի տեսականու մեջ: Անցյալում զգեստներ կարելիս հիմնականում օգտագործել են տնայնագործական գործվածքներ և միայն ունևոր խավը հնարավորություն ուներ ձեռք բերելու ներմուծված թանկարժեք կտորեղեն: 20-րդ դ. սկզբներից զգեստները հիմնականում կարվել են գործարանային կտորներից:

1910-ական թթ. քաղաքային հարուստ խավերի, առաջին հերթին երիտասարդ կանանց հագուստում կիրառվել է գլխի հարդարանքի ավանդութային համալիրը՝ եվրոպական հագուստին զուգահեռ, կարևորելով տարազի այդ մասի՝ գլխի հարդարանքի նշանային դերը: Կանայք սկսել են հագնել երկմաս վերնազգեստ՝ *յուբկա* և *կուրտկա* կամ ամբողջական զգեստ-*դեյրա*՝ վրայից վերարկու-*պալտո*: Փոխվել են նաև գլխի հարդարանքը, մազերի սանրվածքը և ոտնամանի տիպը:

Ավանդական հագուկապի փոփոխությունները 20-րդ դարասկզբին

20-րդ դարի առաջին քառորդում հայոց ավանդական տարազի համալիրներում նկատելի են դառնում եվրոպական նորաձևության միտումները: Քա-

դաքային միջավայրում հարուստ տղամարդկանց և կանանց հագուստի մեջ կատարվում են էական փոփոխություններ: Տղամարդիկ սկսում են կրել եվրոպական հագուստ՝ երկմաս կամ եռամաս եվրոպական կոստյում, սպիտակ վերնաշապիկ, ժապավենազարդ (*բաբոչկա*): Գլխին կրում են եվրոպական գլխարկ, ձեռքին բռնում ձեռնափայտ: Ունևոր կանայք հագնում են երկմաս հագուստ՝ *յուբկա-կոֆտա*, գլխներին կրում լայնեզր գլխարկներ: Ավանդական ոտնամանի ձևերը փոխարինվում են եվրոպական տուֆլիներով:

Վերնախավի և մտավորականության ներկայացուցիչները, եվրոպական նորաձևության ազդեցությամբ[1], դուրս են գալիս ավանդականացված շրջանակներից՝ յուրացնելով արևմտաեվրոպական հագուստի առօրյա և տոնածիսական համալիրները՝ նոր լրապիտույքներով (*աքսեսուարներով*) հանդերձ (փողկապ, ժապավենազարդ, ձեռնափայտ, հովհար, անձրևանոց-հովանոց, ձեռքի պայուսակներ, դրամապանակ ևն):

Սոցիալական մյուս խավերը՝ արհեստավորներ, գյուղացիներ, մինչև 1930-ականներն ավելի հարազատ են մնացել ազգային տարազին:

1920-ականներին կանանց հագուստի տարրերի ուրվագծում և ձևվածքում եվրոպական նորաձևության ազդեցությամբ նկատվում է հետևյալ կարևոր փոփոխությունը: Կիսաշրջազգեստ յուբկայի կամ ամբողջական զգեստի փեշերը կարճանում են, վրայից կրում են եվրոպական ձևվածքի վերարկու կամ կարճ վերնազգեստ:

Գլխի հարդարանքում ևս կատարվում են փոփոխություններ: Երիտասարդ կանանց բազմատարր գլխի հարդարանքից հանվում են ճակատակալները, գլխաշորերը, ճակատազարդերը, դրա փոխարեն կիրառության մեջ են մտնում գլխարկների նոր տիպեր: Դա արմատական նորամուծություն է, քանի որ, ըստ ավանդական ընկալման, գլխարկը տղամարդու խորհրդանիշն է, գլխաշորը՝ կնոջ: Շատ կարևոր փոփոխություն էր և կանանց սանրվածքի նոր ձևը՝ մազերը հավաքում են գագաթամասում և հարդարում տարբեր հերակալներով, սանրերով[2]:

Խորհրդային կարգերի հաստատմանը զուգընթաց՝ ձևավորվում է «նոր մարդու, մարտիկի, հերոսի, արդարության, հումանիզմի, բարու և գեղեցկության իդեալներով նոր կյանքի կառուցողի» կերպարը[3]: Հագուստում այդ կերպարը ևս ստանում է իր արտահայտությունը՝ նպատակ հետապնդելով համապատասխանեցնել «նոր կյանքին, սոցիալական կարգին և նոր գաղափարներին ու հեղափոխական բարոյականությանը»: Այս առումով շատ բնութագրական են տարազի նկարիչ Ն. Լամանովայի 1919 թ. Գեղարվեստական արդյունաբերության Համառուսական կոնֆերանսում ելույթի խոսքերը. «*Նկարիչները հագուստի ոլորտում պետք է նախաձեռնությունը վերցնեն իրենց ձեռքը՝ ստեղծելով հագուստի պարզագույն, բայց գեղեցիկ մոդելներ հասարակ*

1 Каминская 1986, 87, 138.

2 Պողոսյան 2006, 177:

3 Каминская 1986, 147.

կտորներից, որոնք կհարմարվեն աշխատանքային գործունեության նոր կարգին»[4]:

Հայ իրականության մեջ ևս 1920-ականներին բոլշևիկյան գաղափարախոսությամբ տոգորված երիտասարդ կանանց արտաքին կերպարում նկատելի են արմատական նորաձև փոփոխություններ: Հակառակ ավանդական ընդունված *էրիկեփին*՝ նրանք կարճ կտրում են մազերը, շրջում գլխաբաց կամ էլ կրում են կարմիր գլխաշոր (եռանկյունաձև) կամ գլխարկ-*կոմունարկա*: Խորհրդային դպրոցներում աշակերտները պարտադիր կրում էին կարմիր վզկապներ, իսկ կարմիրբանակայինները՝ *կոմունարկաներ* (գլխարկներ): Այսօր թե՛ վզկապը, թե՛ կոմունարկան դարձել են պատմաբաներ, որովհետև բովանդակային առումով այլևս գոյություն չունեն[5]:

20-րդ դարի սկզբներին, առաջին հերթին՝ երիտասարդ աղջիկները, կանայք քաղաքային միջավայրում գործածել են կարճ փողքերով՝ եզրերին ժանյակե ժապավեններ, վարտիք: Հետը հագել են կարճ, կրծքամասն ասեղնագործած, մինչև ծնկները հասնող քաղաքային տիպի շապիկ: Երևան, Ալեքսանդրապոլ, Ախալցխա, Ախալքալաք և այլ քաղաքներում երիտասարդ կանանց հագուստում մեծ տարածում ստացավ նորատիպ, փեշի մասում ծալաբոլորքով (*աբոռկայով*) շապիկը՝ առանց թևքերի, եզրերն ասեղնագործ կամ ժանեկագործ երիզներով:

20-րդ դ. սկզբներից հայկական ավանդական տարազը տեղի է տվել եվրոպական և ռուսական քաղաքային տարազին, որը լայն տարածվել է հատկապես քաղաքաբնակների մեջ: Քաղաքային միջավայրում կանանց ներքնազգեստում սկսել են օգտագործել սպիտակ բամբակե կտորից նոր տարր՝ կրծկալ-*լիվչիկ*: Այն կոճկվել է թիկունքից և երկարությունը հասել է մինչև գոտկամաս:

Զգեստի գույնի ընտրության հարցում նկատելի են գույնի նշանային գործառույթի դրսևորումները, գունամտածողության և ժողովրդական փորձի առանձնահատկությունները: Կարմիրը սկզբնապես որպես հեղափոխական գույն, կիրառվում էր միայն գլխի հարդարանքի տարրերում՝ կարմիր գլխարկ, գլխաշոր:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ կանանց (հատկապես երիտասարդների) հագուստը առավել ճկունությամբ է արձագանքում ժամանակի և նորաձևության պահանջներին, սակայն քաղաքային և գյուղական միջավայրերում դրա աստիճանները էականորեն տարբեր են:

Հագուստը, կորցնելով ազգային ինքնատիպ բնութագիրն ու ոճը, դուրս գալով սեռատարիքային խիստ կանոնակարգված-*ռեգլամենտավորված* շրջանակներից, ձեռք է բերել համընդհանուր գծեր՝ շարունակելով մնալ սոցիալական գործոնների ազդեցության ներքո:

4 Стриженова 1972, 17.

5 Մարգարյան 2021, 162:

Հագուստը խորհրդային հասարակության առօրեականության ցուցիչ-ինդիկատոր

Հագուստը, առօրյա մշակույթի կարևոր մաս կազմելով, որոշակի առանձնահատուկ գծեր է ներկայացնում խորհրդային բազմաշերտ միջավայրում. բացի կիրառական նշանակությունից, դրսևորում է նաև կրողի հոգեկան, զգացմունքային, գեղագիտական նախընտրությունները, ճաշակն ու իր կարգավիճակի ընկալումներն ու պատկերացումները, ցանկություններն ու միտումները:

Շատ կարևոր են կոլեկտիվիստական բնույթի հասարակության գեղագիտական նախընտրությունների և համընդհանուր կարծիքի ու թելադրանքի ազդեցության արտահայտությունները հասարակության տարբեր խավերի արտաքին կերպարում և հատկապես հագուկապի մեջ[6]:

Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին քարոզվում էր պաշտոնական գեղագիտություն, խորհրդային մարդու կերպարի առանձնահատուկ գծերի կարևորությունը նաև հագուստում՝ համեստություն, պրակտիկություն, հարմարավետություն, գործնականություն, միատիպություն և համընդհանրություն չտարբերվող և համընդհանուր տարածում ունեցող հագուստում: Այդ ժամանակահատվածի հագուստները զերծ են այսպես կոչված դեկորատիվ շքեղությունից՝ փողկապ, ժանյակ, ծալաբոլորք, կրծքազարդ-*բրոշկա* ևն: Կոմիսարների, կուսակցական ղեկավարների շրջանում տարածում են ստանում կաշվե բաճկոն-*կուրտկաները*, *պլաշները*-զինվորական *գիմնաստյորկաները* և սատինե թեքօձիք շապիկները: Կանանց հագուստում տարածվում են մահուդից և կտավից ուղիղ յուբկաները, չթից *բլուզներն* ու *կուրտկաները*:

Մի հետաքրքիր դրվագ՝ կապված տղամարդու գլխարկի անվան հետ: Խորհրդային շրջանում, երբ առաջին անգամ ավտոմեքենա է երևացել հայկական գյուղական միջավայրում, լեռներում մորթե գլխարկ կրող՝ «փափախավոր» գյուղացի տղամարդիկ ապշահար էին այդ զարմանալի սայլը տեսնելով, որն առանց եզների էր գնում: «Փափախավոր» մարդկանց մեքենայի մեջ նստեցնելիս, երբ ազատ տեղ էր լինում, նրանց վճարած փողը վարորդն իր գրպանն էր դնում: Հետագայում դա դառնում է սովորություն, կենցաղ, իսկ ճանապարհին վերցրած մարդիկ ստանում են «փափախ» անունը, նրանց վճարած փողը՝«փափախի փող»[7]:

«Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի ավելի վաղ համարների՝ 1924-1934 թթ. դիտարկումը ցույց է տալիս, որ հայկական գյուղական միջավայրում կանայք դժվարությամբ են հրաժարվել ավանդական գլխաշորից, և նրանք հիմնականում պատկերված են գլխաշորերով: Դժվար է համաձայնել այն տեսակետին, ըստ որի՝ «*Սովետական Միությունում հագուստով առանձնանալը և սեփական անհատականության մասին որևէ պատկերացում ունենալը գրեթե անհնար էր, քանի որ բոլորը, համաձայն պետական քարոզչության, միանման պետք է լինեին թե հագուստով և թե մտածելակերպով: Եւ հագուստը դառնում*

6 Дудникова 2003, 383-395.

7 Քոչար 1981, 26:

էր պետական քարոզչության մի մաս»[8]: Սա միագիծ մոտեցում է: Նախ՝ խորհրդային հասարակությունը բոլորովին էլ միատարր չէր. կային տարբեր խմբեր, ենթախմբեր ու շերտեր: Մյուս կողմից՝ հայտնի է, որ իդեալականի և իրականի, տեսության և պրակտիկայի, քարոզչության և առօրյա կյանքի, ժամանակաշրջանի վաղ և ուշ փուլերի միջև առկա էին նկատելի տարբերություններ:

Հայրենադարձություն և նորաձևություն

Ետպատերազմյան շրջանի հայկական միջավայրում ենթաէթնիկ խմբերի՝ տեղացիների և եկվորների հագուստների քննության ընթացքում բացահայտվում են ենթաէթնիկ և ներէթնիկ խմբերի հագուկապում դրսևորված որոշակի տարբերություններ:

Նորեկների հագուստը և մի շարք մշակութային երևույթներ սկզբնական շրջանում տարբերվում էին տեղացիների մշակույթից: Ետպատերազմյան շրջանում Ֆրանսիայից, Բալկանյան երկրներից, Եգիպտոսից, Բեյրութից եկած հայերը կրել են եվրոպական հագուստ՝ կոստյում, լայնեզր գլխարկ, սեզոնային վերնազգեստներ, կաշվե և զամշե ձեռնոցներ: Առանձնացել են կոկիկ տեսքով և սանրվածքով[9]: Դրանք անսովոր էին տեղացիների համար: Թեև քաղաքային միջավայրում լայնեզր գլխարկ և փողկապ կրել են տեղացի մտավորականները, հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչները:

Նորեկ կանայք հագել են բաց գույների և գունեղ, վզի բացվածքով, անթև, կարճաթև զգեստ, իրանը կիպ գրկող կոստյումներ, տարբեր ոճի և գույնի կոշիկներ: 1950-ականներից տեղացի որոշ խավերի կանայք՝ կուսակցական, մտավորական, արվեստագետ և պաշտոնյա տղամարդկանց կանայք, ընդօրինակելով նորեկների դրսից բերված հագուստները և կոշիկները, չբավարարվելով տեղական արտադրության ապրանքների որակով, դրանք պատվիրում էին հայրենադարձ դերձակներին և կոշկակարներին:

Հիմնականում խորհրդային քաղաքացիների հագուստը տարբերվում էր եվրոպականից, քանի որ տեղական արտադրության էր, և գաղափարական առումով չէր խրախուսվում ընդհանուրից տարբերվել հագուստով, արտաքինով ու վարքուբարքով: Այդ տարիներին սովետական էսթետիկային և բարոյական սկզբունքներին բնորոշ էին հագուստի զուսպ ու չափավոր, իրանը երկու սեռերի դեպքում էլ չգրկող, ոչ-սեքսուալ ձևվածքները: Իսկ որոշ տղամարդիկ, ընդօրինակելով Ստալինին, հագել են զինվորական համազգեստի՝ երկար, հատկապես սպիտակ կիտելների ազդեցությամբ ձևավորված հագուստներ. լայն շալվարներ, պիջակներ: Կանայք կրել են մուգ՝ սև, մոխրագույն, կապույտ հագուստներ՝ երկարափեշ և երկարաթևք, վզի փոքր բացվածքով զգեստներ:

Գյուղական միջավայրում՝ Լոռվա, Սպիտակի գյուղերում, տեղացիները ծաղրել են տղամարդկանց փողկապները՝անվանելով «իշի նոխտի»՝ ավանակի

8 Հագուստը՝ որպես քարոզչության գործիք. ԵՊՀ-ում ներկայացրին գենդերային հետազոտության արդյունքները, http://www.old.ysu.am/news/hy/Clothing-as-propaganda-tool

9 Ստեփանյան 2010, 218-223:

վզկապ, լայնեզր գլխարկը՝«լագլագի բուն», իսկ կանանց խցանե ներբանով կոշիկները՝ «արջի թաթ»[10]: Անսովոր էին նաև պատանիների՝ մինչև ծնկները հասնող կարճ շալվարները, որոնց մասին տեղացիները կատակել են, որ կտորը չհերիքելու պատճառով երեխայի ոտքերը բաց են մնացել:

Տեղացիների կարծիքով՝ նորեկների հագուստը ավելի շատ բեմական հագուստ է հիշեցրել: Գյուղերում դեռևս տրեխներ էին հագնում, ուստի նորեկ կանանց բարձրակրունկ կոշիկները անսովոր էին դիտվում գյուղական միջավայրում: Տղամարդիկ հագել են զինվորական ճտքակոշիկ, բամբակե կոպիտ շալվար, տելեգրեյկա ու բրդե փափախ: Սիբիայից, Իրաքից եկած հայերին հիմնականում տեղավորել էին գյուղերում: Նրանք կրում էին լայն շալվարներ և գլխի փաթթոցներ: Սկզբնական շրջանում տեղացիները իրենց հագուստներից բաժին են հանել եկվորներին՝ «հայի շնորհք» ստանալու համար:

1950-ականներին նորեկ տղամարդիկ սկսեցին կրել տեղական կեպիներ: Նրանց եվրոպական հագուստները գյուղերում շատ տարածում չստացան, մինչդեռ քաղաքային միջավայրում դրանք աստիճանաբար տարածվեցին և մինչև 1960-1970-ականները էական ազդեցություն ունեցան քաղաքային մշակույթի հագուկապի առանձնահատկությունների ձևավորման վրա:

Ուշխորհրդային շրջան

1960-1980-ականներին հայաստանյան իրականության մեջ աճում է նորաձև, գեղեցիկ հագնվելու ձգտումը: Նկատելի է դառնում որոշ թաբուների շրջանցում, արտասահմանյան հագուստի գերադասումը տեղական գործարանային արտադրանքից: Տարածվում է շոր կարել տալու կամ կարել-գործելու երբեմնի մշակույթի ավանդույթը, ինչպես նաև պրեստիժային համարվող արտասահմանյան կարով և ֆիրմային պիտակով, թեկուզ նմանակած, հագուստների դերն ու նշանակությունը: Արտասահմանյան արտադրության հագուստն ու կոշիկը ուշխորհրդային շրջանում մարդկանց սոցիալական և տնտեսական կարգավիճակի, երիտասարդների շրջանում՝ նորաձև, առաջադեմ լինելու և արտասահմանյան նորաձևության միտումների հետևորդ լինելու ցուցիչ էին:

Արտասահմանյան հագուստ, ամերիկյան ջինսեր, ավստրիական կամ իտալական, հարավսլավական կոշիկ և աքսեսուարներ կրողներն իրենց համարում էին նորաձև և առաջադեմ: Երիտասարդները և հարուստ խավի ներկայացուցիչները շարունակում էին մնալ որպես նորի և նորաձևության կրողներ ու տարածողներ: Այս առումով շատ հետաքրքրական է հայտնի խեցեգործ, հայ դեկորատիվ արվեստի հիմնադիր Հռիփսիմե Սիմոնյանի փորձառությունը: Ըստ նրա թոռնուհու տվյալների՝ «*Հռիփսիմե Սիմոնյանը էսթետ էր իր բնույթով և կերպարով: Տեղական արտադրության հագուստից, կոշիկներից խուսափելու նպատակով նա Թեհրանից հայրենադարձված վարպետներին, որոնք կարել էին ոտնամաններ շահական ընտանիքի անդամների համար, պատվիրել է «լոդոչկա» ոտնաման: Դերձակներին պատվիրել է զգեստ, յուբկա և կոֆտա՝*

10 Ստեփանյան 2010, 222:

դրսից բերված կտորներով: Հագուստները նույն ֆասոնով էին, կտորներն էին տարբեր: Յուրաքանչյուր շորի հետ ունեցել է վերարկու՝ անկախ սեզոնից: Հանդիսավոր իրադարձություններին կրել է թիկնաշոր և բռնել կլաչ»[11]:

Կանանց հագուստը, ի տարբերություն ավանդական տարազի, համալիրների կայունության, խորհրդային, հատկապես ուշխորհրդային շրջանում ուներ փոփոխուն կերպար՝ տղամարդկանց եվրոպական հագուստի ազդեցությամբ ձևավորված համալիրի՝ եռատարր կոստյումի համեմատական պահպանողականության պայմաններում:

Կուսակցական վերնախավի, նոմենկլատուրայի արական ներկայացուցիչները կրում էին եռամաս կոստյում՝ շալվար, պիջակ, վերնաշապիկ՝ համապատասխան գոտիով և փողկապով, թեզանիքակալներով: Փողկապը դառնում է սոցիալական, կուսակցական վերնախավի հագուստի պարտադիր տարր: Բեմարվեստի տղամարդ ներկայացուցիչները նախընտրել և նախընտրում են ժապավենաձև փողկապները: Այսօր էլ պետական այրերը աշխատանքի ժամանակ, պաշտոնական հանդիպումներին և արարողություններին ներկայանում են պաշտոնականացած հագուկապով:

Կանանց շրջանում պրեստիժային համարում ունեին բնական մորթուց մուշտակները, կաշվե բաճկոնները և հաճախակի փոփոխվող հագուստները, որոնք սպառողական հասարակությանը և մշակույթին բնորոշ ատրիբուտներ են:

Հագուստի գունային առանձնահատկությունները

Խորհրդային շրջանում հագուստի գունային ընտրության մեջ ավանդական համալիրը՝ կարմիր-կանաչ-կապույտը, անճաշակ և հետամնաց համարվելով՝ փոխարինվել է նոր գեղագիտական իդեալին համապատասխանող գորշ, անգույն, աչքի չզարնող և փայլատ գուներանգների նախընտրությամբ: Վառ, լի գույները որպես անցյալի մերժվող մշակույթի տարր, խորթ էին համարվում վաղ խորհրդային ժամանակներին: Կարմիր գույնը որպես հեղափոխության գույն սկզբնապես, կիրառվում էր միայն և հատկապես կանանց գլխի հարդարանքում՝ կարմիր գլխարկ, եռանկյունաձև, ծոծրակին հանգուցվող գլխաշոր ևն: Թեև դա էլ բավական շուտ դուրս եկավ կիրառությունից: Փոխվեց նաև որոշ կանանց մազերի կտրվածքը՝ երկար հյուսքերը դարձան կարճ: Հագուստի գունային լուծման մեջ ընդգծված միօրինակություն, մոխրագույն անդիմություն կար: Հարգի չէին կրողի անհատականությունը շեշտող վառ, արտահայտիչ, բուրժուական համարվող գույները:

1940-1950-ականների կանանց հագուստում գունային երանգների որոշակի աշխուժացում է տեղի ունենում՝ սփյուռքահայերի հետ մշակութային սերտ կապերի շնորհիվ կենցաղ մտած եվրոպական հագուստի ազդեցությամբ: Երկրորդ Աշխարհամարտից հետո տղամարդկանց հագուստում նկատելի է դառնում զինվորական հագուստի ազդեցությունը: 1960-ականներին երիտասարդ

11 Սվետլանա Պողոսյան 2023, մարտի 8. հարցազրույց Արևիկ Գրիգորյանի հետ:

տղաների որոշակի շրջանում տարածվում է *սրիլյագների* հակամոդան՝ որպես հակադրություն պաշտոնական քարոզվող և քաջալերվող մոդային: Դրա ամենաբնորոշ գծերից է՝ վառ, ընդգծուն գույների համարձակ օգտագործումը:

Երիտասարդ տղաների տարիքային խմբում կարելի էր տարբերակել երեք ենթամշակութային խումբ՝ ա. ընդհանուր հագուկապին ընդվզող և դրա միջոցով ինքնահաստատվող ենթախումբ, որը հակադրվում էր ընդհանուր գունային ճաշակին, բ. քաղաքի ազատ պայմաններում բնակվող գյուղացի տղաների ինքնատիպ ճաշակի դերձակներին պատվիրվող կարմիր, բորդո, կանաչ և առօրյա կյանքում անսովոր դիտվող գույների կտորներից շալվարներ, կոստյումներ: Աղջիկների շրջանում դա արտահայտվել է փայլուն՝ պլպլան կտորներից թանկարժեք հագուստ կրելով: Հաջորդ խումբը քաղաքային մոդային (որը պարտադիր չէ, որ համընկներ արտասահմանյան նորաձևության միտումներին) հետևող պրեստիժային համարվող հագուստների կրողների խումբն է: Հասարակության ստվար մասը կրել է զանգվածային արտադրության, գերազանցապես մուգ գույնի կոստյում-շալվար[12]: Կոկո Շանելի սև կարճ զգեստի փոխարեն խորհրդահայ մշակույթում 1960-1970-ականներին հարգի էին կանանց սև, երկար միդի յուբկաները՝սպիտակ վերնաշապկի համադրությամբ: Գյուղական միջավայրում կանանց ամենագործածական զգեստը բումազե կամ չթե խալաթն էր, գլխաշորի և հողաթափերի հետ համատեղ: 1970-1980-ական թթ. խորհրդային տուրիստները տարբերվել են իրենց հագուկապով՝ խալաթներ կանանց հագուստում, տղամարդկանց շրջանում՝ սպորտային համազգեստ-մարզահագուստ/ «սպարտիվկա»:

Ուշխորհրդային և ետխորհրդային ժամանակներում որոշ պաշտոնյա տղամարդկանց շրջանում տարածվում է բաց երանգների՝ բաց մոխրագույն, նույնիսկ սպիտակ գույների եռամաս կոստյումի համալիրը՝ շալվար, ժիլետ, պիջակ: Եւ դա տղամարդկանց որոշ խավերի համար պրեստիժային նշանակություն ուներ: Ետխորհրդային շրջանում տղամարդկանց և կանանց տարբեր տարիքային խմբեր յուրովի են վերաբերում հագուստին և նրա գունային ընտրությանը:

1990-ականներին երիտասարդ աղջիկների հագուստի ամենահարգի և տարածված գույնը սևն էր՝ ի տարբերություն տղաների հագուստում նկատվող գունագեղության միտման: Հայկական միջավայրում կանանց հագուստում սև գույնի տարածվածությունը թերևս կարելի է բացատրել մարմնի ծավալագծերը փոքրացնելու միտմամբ, քանի որ մուգ և սառը գույները տեսողականորեն փոքրացնում են մարմնաձևերը, մինչդեռ տաք և վառ գույները՝ հակառակ էֆեկտն են տալիս: Տարեց խմբի կանայք բավական ժամանակ ձեռնպահ էին մնում սև գույնի հագուստ կրելուց՝ որպես սգո նշան և ավանդական գունամտածողության թելադրանք: Սակայն դա ևս հաղթահարվեց, ինչպես ժամանակին նրանց մերժողական վերաբերմունքը կանանց կողմից շալվար հագնելուն և դրանք կրողների նկատմամբ: Վրացական մշակույթում սև զգեստ հագնելու ձգտումը

12 Պողոսյան 1990, 52-53:

գալիս է սեփական արժանիքներն ընդգծելու միտումից՝ վերածվելով հարգարժանային ցուցիչի, իսկ պարսկական մշակույթում սևը բարոյականության, կրոնականության ցուցիչի դեր ունի:

Հագուստի արտադրություն

Հայաստանյան իրականության մեջ հագուստ արտադրել են տեքստիլի գործարաններում, արտելներում և այսպես կոչված նորաձևության սրահներում[13]: Դեռևս 1911 թ. Երևանում հիմնվել է ոլորտի առաջին խոշոր արտադրությունը՝ բամբակամանվածքային գործարանը, որի արտադրանքը արտահանվում էր: Խորհրդային ժամանակահատվածում Հայաստանում հիմնվել են մի շարք խոշոր տեքստիլի և տրիկոտաժի գործարաններ՝ Երևանում և հանրապետության այլ գլխավոր քաղաքներում՝ Գյումրիում, Վանաձորում, Չարենցավանում և այլուր: Թեթև արդյունաբերության ոլորտի արտադրանքը կազմում էր Խորհրդային Հայաստանի տնտեսության շուրջ մեկ երրորդը: Խորհրդային տնտեսության մեջ Հայաստանը տեքստիլ և տրիկոտաժ արտադրանքի խոշորագույն մատակարարներից էր:

Ետանկախացման ժամանակահատվածում, ինչպես տնտեսության այլ ճյուղերը, Հայաստանի տեսքստիլի և տրիկոտաժի ոլորտը 60%-70% անկում է արձանագրել: Խոշոր գործարանները, չկարողանալով ձեռք բերել անհրաժեշտ հումք և ապահովել իրացման շուկաներ, աշխատում էին իրենց հզորությունների չնչին չափով կամ ընդհանրապես կանգ էին առել: 1990-ականների վերջից ոլորտը կրկին աշխուժացավ՝ շնորհիվ ինչպես արտերկրյա պատվերների (հիմնականում տեքստիլի կարի ծառայության մատուցում), այնպես էլ սեփական արտադրանքի (հիմնականում՝ տրիկոտաժի) արտադրության աճի:

Լենինականի տեքստիլ կոմբինատի և մյուս գործարանների արտադրանքն իրացվել է միութենական հանրապետություններում, և արտադրանքի շատ տեսակներ ստացել են որակի պետական նշան: Լենինականի տեքստիլ կոմբինատի աշխատակցի հուշերից. «Ներքնաշորերն ու գուլպեղենը գյուղերից գալիս էին ու մեր մոտից առնում: Տեղականը շատ էլ լավն էր: Ես էլ եմ հագել: Ռետուզները երեխեքին էինք հագցնում: Բամբակից էին, շատ լավ գործվածք էր: Չիթ էլ էին բերում. բիազ, անկողնու կտորեղեն: Հագուստները պատվիրում էինք պարտնիխաների մոտ, ամեն մարդ իր պարտնիխան ուներ: Հատուկ արտելներ կային, քո կտորը տանում էիր՝ քո համար շոր էին կարում, ինչ ուզեիր, կարել էիր տալիս: Կտորեղենը վաճառում էին խանութներում, ունիվերմագներում»: Հավելենք, որ հաճախ դերձակները կարում էին այն, ինչ կարողանում էին:

Շատ հայտնի էին նաև Երևանի «Մասիս» արտադրական միավորման կոշիկները, որոնք հիմնականում արտահանվել են: Այս տեսանկյունից տիպական է Երևանի պատմության թանգարանում կազմակերպված Խորհրդային Հա-

13 Հայաստանի տեքստիլ և տրիկոտաժի ոլորտի զարգացման ռազմավարություն 2013 թ. դեկտեմբերի 6 https://www.mineconomy.am/media/2232/1473.pdf

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻ
№3 (62)
ՄԱՐՏ 1930

1

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻ
№ 12—13

2

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻ
ԿԵՑՑԵ
XIII-ՐԴ
ՀՈԿՏԵՄԲԵՐԸ
1917—1930

3


ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻ
ԿԵՑՑԵ ՄԱՅԻՍԻ 1-Ը
№6

4

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻ
10 (69) ԵՐԵՎԱՆ
N11 (70)

5

ՀԱՅԱՍՏԱՆԻ
1930
ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀԻ
ԼԵՆԻՆԻՍՏԻ-ՀԱՄԱՌԱՅՆ

6

7

1

2

3

4

5

6

7

8

յաստանում արտադրված հագուստի և կոշկեղենի ցուցադրության այցելուների կարծիքները: «*Լինելով մասամբ այս իրականության մի մասնիկը՝ ապրել եմ Սովետական Հայաստանում, բայց ես իմ մանկության ընթացքում չեմ հիշում նման գունագեղ կոշիկներ: Գուցե լավ չեմ ֆիկսել, փոքր եմ եղել, չեմ հիշում կանանց, որոնք այսպիսի գունագեղ, գեղեցիկ, նրբաճաշակ կոշիկներով էին*»: Որոշ կանանց կարծիքով՝ «*իրենց տատիկների սիրելի հագուստն ու կոշիկները նորաձև են ու կարելի է կրել նաև այսօր*»: Այս բոլորը խոսում է այն մասին, որ հագուստը խորհրդային շրջանում հասարակության տարբեր խավերում տարբերվել է:

Հագուստը ետխորհրդային հասարակության առօրեականության ցուցիչ-ինդիկատոր

Կանանց հագուստի գունային լուծումը խորհրդայինի համեմատ նկատելիորեն պայծառացել է, դարձել գունագեղ՝ կապված նորաձևության ամենամյա փոփոխությունների հետ: Ի դեպ, նկատելի էր արտասահմանյան եվրոպական մոդայից տարբերվող, հաճախ ուշացած տարբերակը: Երիտասարդ տարիքային խմբերը, վերնախավի ներկայացուցիչների մի մասը, որպես նորաձևության առաջամարտիկներ, արագ են արձագանքում նորանոր *թրենդներին*՝ կարճ շալվար, շորտ, առանց գուլպայի կամ շատ կարճ գուլպաներով ոտնաման, կարճ *տոպ* են:

Հագուստի թե՛ գույների և թե՛ տարրերի ընտրության հարցում ետխորհրդային կենցաղում նկատելի են առօրյա և երեկոյան՝ տոնական, հարսանեկան, սեզոնային, կիրառական գործառույթների խառնման, նույնացման միտումները: Խախտվում են հագուստի տաք և հով, ձմեռային-ամառային, տղամարդու և կնոջ, ինչպես նաև կառուցվածքային՝ ներքնազգեստի և վերնազգեստի տարբերակվածության սկզբունքները: Դրանք նորաձևության նոր թրենդների, ինչպես նաև կենցաղի առանձնահատկությունների, ժամանցի և հանգստի կազմակերպման հիմնախնդիրների հետևանք են:

Խորհրդային շրջանում հայ հանրույթի երիտասարդ կանանց հագուստի մեջ շրջանցվում և խախտվում են որոշ թաբուներ՝ սև զգեստ կրելը, շալվար, կոստյում հագնելը, վառ դիմահարդարանքը են: Երիտասարդ կանանց հագուստում կարելի է տեսնել կարճաթև և անթև զգեստներ՝ ճտքակոշիկի համադրությամբ:

Եզրակացություն

Հագուստը դրսևորում է կրողի ու տվյալ մշակութային միջավայրի առանձնահատկությունները, որոնք բոլորովին տարբեր բնույթ և արտահայտություններ ունեն ամբողջատիրական, սպառողական, ազատական բնույթի հասարակություններում:

Հագուստը զգայուն է ժամանակաշրջանի նորաձևության պահանջների և միտումների, ինչպես նաև սոցիալական, տնտեսական և այլ բնույթի փոփոխությունների նկատմամբ: Այսպես՝ տղամարդկանց երբեմնի ներքնազգեստ -շապիկը, կարճ շալվարները դառնում են համընդհանուր բնույթի վերնազգեստ: Նույ-

նիսկ համավարակը նոր թրենդներ առաջացրեց նորաձևության ոլորտում, երբ տան շորը, մարզահագուստը դարձան կիրառելի և ընդունելի նաև դրսում: Ժամանակակից հագուստում հասարակության որոշ երիտասարդական ենթախմբերում (թե՛ աղջիկների և թե՛ տղաների) նկատվում են նաև հագուստի սեզոնայնության գործառույթը շրջանցելու միտումներ: Մյուս կողմից՝ այսօր նկատվում է նաև հայկական տարազի, առանձնապես տոնական համալիրների նկատմամբ որոշակի հետաքրքրվածություն, անգամ կիրառելիության աստիճանի՝ հատկապես ազգային մշակույթ և ավանդույթ գնահատող երիտասարդների շրջանում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ 2021
Մարգարյան Ռ.Հ., Հնաբանությունները, նորաբանությունները, նոր և նորագույն փոխառությունները հագուստ անվանող բառերի իմաստային դաշտում // Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Երևան, «Լինգվա» հրատ., 2021, 1, 161-177:

ՊՈՂՈՍՅԱՆ 1990
Պողոսյան Ս.Հ. , Հագուստը որպես սոցիալ-հոգեբանական ցուցիչ, Զեկուցումների հիմնադրույթներ, 1990 հունիսի 5-7, նվիրվում է Երվանդ Լալայանի հիշատակին, ծննդյան 125-ամյակի առթիվ, Հանրապետական գիտական նստաշրջան 1986-1988 թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները, Հայկ. ԽՍՀ ԳԱ հրատ., Էջմիածնի տպարան, 1990, 52-53:

ՊՈՂՈՍՅԱՆ 1987
Պողոսյան Ս.Հ. , Այրարատի տարազախումբը // Կուլտուր-լուսավորական աշխատանք, 1987, թիվ 7, էջ 22-32:

ՊՈՂՈՍՅԱՆ 1999
Պողոսյան Ս.Հ. , Հայոց գունընկալման ժամանակակից միտումները, Հայ ժողովրդական մշակույթ 40, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, ՀԱԻ հրատ., 1999, 66-68:

ՊՈՂՈՍՅԱՆ 2006
Պողոսյան Ս.Հ., Երևանի տարազի հարսանեկան համալիրը // Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Զանգակ-97», 2006, 172-177:

ՊՈՂՈՍՅԱՆ 2018
Պողոսյան Ս.Հ., 2018, Այրարատի տարազախումբը հայոց տարազի համատեքստում, Երևան-5 գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Զանգակ-97», 123-142:

ՍՏԵՓԱՆՅԱՆ 2010
Ստեփանյան Ա.Ա., 20-րդ դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Երևան, «Գիտություն», 2010, 218-223:

ՔՈՉԱՐ 1981
Քոչար Հ.Ք., Երկեր, Երևան, «Սովետական գրող», 1981, 503:

ДУДНИКОВА 2003
Дудникова Г.П., История костюма, Ростов на Дону, «Феникс», 2003, 442 с.

КАМИНСКАЯ 1986
Каминская Н.М., История костюма, Москва, Легпромбытиздат, 1986, 181с.

СТРИЖЕНОВА 1972
Стриженова Т.О., Из истории советского костюма, Москва, 1972, 110 с.

Svetlana H. Poghosyan, *Ph.D.*
Senior Researcher at the IAE
Deputy Scientific Director at the MAE

CLOTHING AS A SOCIO-PSYCHOLOGICAL INDICATOR OF SOVIET- AND POST-SOVIET ARMENIAN SOCIETY

Keywords: gender, aesthetic, Soviet, post-Soviet, development trends, preferences, status, foreign.

1. Important aspects of the ethnological study of clothing are gender, social, psychological and aesthetic layers. The study is important in terms of considering trends in the development of traditional culture, as well as Soviet and post-Soviet clothing in various social strata. Clothing, being an important part of everyday culture, demonstrates special features in the multi-layered Soviet society. In addition to practical significance, clothing demonstrates mental, emotional, aesthetic preferences, tastes, as well as perceptions and representations of the real or preferred status, desires and aspirations of the wearer.

It is very important to show the preferences of people, especially women, in relation to domestic and foreign clothing samples in the Soviet society. Equally important are the manifestations of the preferences of society of a collectivist nature and the expression of the influence of common opinion and dictate in the appearance and clothing of various strata of society. In the first decades of Soviet power, official aesthetics, expression of specific features of the image of a Soviet period person modesty, practicality, comfort, monotony and universality were promoted in the manner of behavior, appearance, as well as in clothing.

2. In the 1960s-70s-80s, the desire to dress stylishly and beautifully was growing. Circumvention of some taboos, preference of foreign clothes to local factory products became noticeable. The culture of sewing or knitting clothes to order was spreading. The role and importance of clothing in a prestigious foreign style and with a branded label, though fake, was growing. In the late Soviet period, foreign-made clothing and shoes were indicators of the social and economic status of a given person. Among young people, they were the indicators that they looked fashionable, modern and were the followers of foreign fashion trends.

The one wearing foreign clothing - American jeans, Austrian, Italian or Yugoslav shoes and other accessories, was considered to be modern, fashionable and progressive. Young people and representatives of the wealthy strata continued to be carriers and distributors of the new and fashionable.

3. In contrast to the stability of traditional complexes of national costume, in the Soviet period women's clothing was changeable in the conditions of comparative conservatism of the complex, formed under the influence of European men's clothing - a three-piece suit.

Male representatives of the party elite and nomenclature wore three-piece suits: trousers, jacket, and shirt with a matching belt, tie and cufflinks. The tie became a mandatory element of the clothing of the social, party elite. Male representatives of the stage art preferred bow ties. Even nowadays, statesmen used to wear formal attire at work, at official meetings and ceremonies.

Natural fur coats, leather jackets and frequently changing clothes, which were characteristic attributes of consumer society and culture, were considered prestigious among women.

Светлана Айковна Погосян, *к.и.н.*
ИАЭ, старший научный сотрудник
МЭА, зам. директора по научной части

ОДЕЖДА КАК СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЙ ПОКАЗАТЕЛЬ СОВЕТСКО- И ПОСТ-СОВЕТСКО-АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

Ключевые слова: гендерный, эстетический, советский, постсоветский, тенденции развития, предпочтения, статус, импортный.

1. Важным аспектом этнологического изучения одежды являются гендерный, социальный, психологический и эстетический слои. Их изучение важно для наблюдения за тенденциями развития традиционной культуры, а также одежды в различных социальных слоях советского и постсоветского периодов. Одежда, как важная часть повседневной культуры, представляет особые черты в многослойной советской среде. Помимо практического значения, она демонстрирует психические, эмоциональные, эстетические предпочтения, вкусы, а также восприятия и представления реального или желаемого статуса, желания и стремления носителя. Очень важны проявления предпочтений людей, особенно женщин, в отношении отечественных и импортных образцов одежды в советской среде. Не менее важны проявления общественных предпочтений коллективистского характера, и проявления влияния всеобщего мнения и диктата во внешнем облике и одежде различных слоев общества. В первые десятилетия советской власти пропагандировалась официальная эстетика, выражение специфических черт образа советского человека в манере поведения, внешнем облике, а также в одежде: скромность, практичность, комфорт, однообразие и универсальность в государственной недифференцированной одежде.

2. В 1960 -70-80-е годы растет стремление одеваться стильно и красиво. Становится заметным обход некоторых табу, предпочтение импортной одежды местным фабричным изделиям. Распространяется культура шитья или вязания одежды на заказ. Роль и значение одежды в престижном иностранном стиле и с фирменной этикеткой, даже если она поддельная, растет. В позднесоветский период одежда и обувь иностранного производства были показателями социального и экономического статуса данного человека. Среди молодежи они были показателями того, что они выглядели модно, современно и были последователями зарубежных модных тенденций.

Носитель иностранной одежды - американских джинсов, австрийской, итальянской или югославской обуви и других аксессуаров считался носителем современного, модного и прогрессивного. Молодые люди и представители состоятельных слоев продолжали быть носителями и распространителями нового и модного.

3. В отличие от стабильности традиционных комплексов национального костюма, в советский период женская одежда имела изменчивый характер в условиях сравнительного консерватизма комплекса, сформировавшегося под влиянием европейской мужской одежды - костюма-тройки.

Представители партийной элиты, номенклатуры мужского пола носили костюмы - тройки: брюки, пиджак, сорочку с соответствующим поясом, с галстуком и запонками. Галстук становится обязательным элементом одежды социальной, партийной элиты. Представители мужского пола сценического искусства предпочитали и предпочитают галстуки-бабочки. И сегодня госу-

дарственные деятели на работе, на официальных встречах и церемониях носят официальную одежду, появляются в одежде, которую принято считать официальной.

Престижным среди женщин считались шубы из натурального меха, кожаные куртки и часто меняющаяся одежда, которые являются характерными атрибутами потребительского общества и культуры.

Ներկայացվել է՝,
գրախոսվել է՝
ընդունվել է տպագրության՝